

Ապրիլեան հառաչ

Արդարութիւնը, հանրակին անհոգ
Պատմութեան մայթին վրայ ծնկաչոք
հաստ աչակապն իր կը թաթխէ անվերջ
մատաղ ազգերու ճապաղիքին մէջ

Մենք հաշտ ու արդար
դուք վաշտ մը թաթար
Մենք անդարձ ու ճիշդ
դուք յանկարծ ու վիշտ
դուք դիպուած
արկած
Մենք հաստատ ու միշտ

Արին կը հոսի մեր սել աչքերէն
մութն ու ցաւը մեզ վաղուց կը գերեն
մինչ կը վայելէք դուք ամբարտաւան
բերկրանքը մեր տան
մեր Արցախ ու Վան

Մեր հողերը
մեր ծնեալ հողերը
մեր վարդահեղեղ այգի շողերը

Մեր ոխերը
մեր զինեալ փողերը
մեր մարտաշքեղ Հայկի դողերը

Մենք տոհմ փառապանծ
դուք վոհմակ անսանձ

Մենք երկիր, երկե՛ր
դուք անգիր
ու կեռ

Աշխարհը ցած է, Երկինքը վկայ
թող Աստուած թքնէ մարդկութեան վրայ
Չարը կը յաղթէ
Բարին կը գաղթէ
անբիծ սրտիս մէջ Անցեալը աղտ է

Մեր վսեմ ցեղը
ձեր նսեմ ցեխը

Մեր ծնունդը հին
ձեր անդունդը սին

Մենք անթաղ ու գոհ
 դուք դահիճ ու գոհ
դուք ճահիճ անգոյ
 եւ անխիղճ գրոհ

Եւ թող կոխկոտեն ազգերը անգօր
զանոնք մորթոտեն, շարտեն հեռու
Մենք, մեսիական քայլերով անդորր
կ'անցնինք երեսէն արեան ծովերու

Մենք հաւատք ամուր
 Դուք ցամաք ու մուր
Մենք սլացք՝ այլուր
 դուք անցք ծուռումուռ

Մեր ազգը անբախտ ու հիմնայատակ
Մեր վազքը անյաղթ դէպի յաղթանակ
Մեր տունը՝ դրախտ, կորուսեալ դարձեալ
Մեր հունը անխախտ, անցեալէ անցեալ

Աշխարհը կլոր
մենք թաւալգլոր
եւ դեռ ինչ կ'ըսես որ մենք չտեսանք
ճիշերու յորձանք
 գիշեր ու փորձանք
Մեզ մարդ չի յիշեր
 բայց մե՛նք չմոռցանք

Մենք շաւիղ անշեղ
դուք անջիղ ու զեխ
դուք պիտի քաւէ՛ք ձեր մեղքերն ահեղ
եւ մեր գարունը արիւնահեղեղ

Ձեր դաժան վարքը
մեր բաժան յարգը

Ձեր բռնի փառքը
վաղը... մե՛ր կարգը

Այսօր ոճիրներ, նոր, անասելի
կանչեր դարաւոր, դեռ անլսելի

Այսօր վճիռներ, մահուան պատժագիր
Քաջեր դատաւոր եւ օրէնսդիր

Գոչիւններ ընդոստ, կոչ ընդդիմադիր
շաչիւններ ըմբոստ եւ վրէժխնդիր
աճիւններ անմար եւ հրաբորբոք
հրվէժ անսպառ

յորդ կատղանք

բողոք

Հառաչ...

յառաջ անսասան

Հառա՛չ...

յառաջ անդեղել

ճակատագրի դեմ՝ պայքա՛ր յարատել

Հառաչ... դեհ, հիմա այնտեղ...

գրո'հ է այնտեղ

զինեալ դատաստան

եւ կու գայ շուտով պահը հատուցման

արեան մութիակի

բուն արդարութեան...

Ապրիլէ Ապրիլ՝ ապրի'լ անպայման

մինչեւ նոր Մայիս

Մասիս գերիշխան

28 Մարտ 1991...

«Անվերադարձ», Հայդուկ Շամլեան, Արցախ, 2010

ԱՆՎԵՐԱԴԱՐՁ

Հայրուկ Շամլեան